

ԽՈՐԵՆԱՑՈՒ ՊԵՏՄՈՒԹԵՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Ե.

Խորենացու հակասութիւնները. — Սմբատ = Տրդատ. — Պարոյր չէ . որդի Սկայորի
 դւրս. — Յովհաննէս Կաթողիկոսն այս մասին. — Լանդուայի, Էմինի, Վարադաշեանի
 եւ Ա. Բաումգարտնէրի կարծիքները:

Մեր պատմահօր գրութեանը դարեր շարունակ ընդունուած էր և յարգու-
 ած իբրև սրբազան գիրք, իբրև հաւատարմագոյն աղբիւր ազգային
 պատմութեան, իբրև անպայման հեղինակութիւն, որի առջ խոնարհ-
 ւում էին բոլորը: Պատմութիւն նշանակում էր՝ Խորենացու պատմու-
 թիւնը, Պատմաբան նշանակում էր՝ Խորենացի, ինչպէս Հերոդոտը Յու-
 նաստանում, ինչպէս Արիստոտէլը փիլիսոփայութեան մէջ, ինչպէս Հոմը-
 մը քաղաքների մէջ, Բայց առ միշտ այս այսպէս չէր կարող մնալ: Խո-
 րենացու երկասիրութիւնը թարգմանուեց արևմտեան լեզուներով, ուրիշ
 խօսքով ասած՝ Խորենացին մատչելի դարձաւ գիտնական աշխարհին:
 Քննադատութիւնը չէր կարող վերաբերուիլ այդ նորեկին այն հաւատով,
 այն ակնածութեամբ, որով վերաբերուել էր հայ նահապետական աշխար-
 հը՝ իւր Պատմահօրը, քերդողահօրը: Խիստ և դառն քննադա-
 տութիւնը, ընդունելով հանդերձ Խորենացու շատ արժանաւորութիւննե-
 րը, շատ բան խլեց, շատ բան պակասացրեց նրա անպայման հեղինակու-
 թիւնից: Գիտնական աշխարհի քննադատութեան լաւագոյն արտայայտու-
 թիւնն եղաւ մեր հայ գրականութեան մէջ Ա. Մ. Վարադաշեանի «Քնն-
 նական Պատմութիւն Հայոց» լուրջ և հմուտ երկասիրութիւնը (1880, Կ.
 Պոլիս): Շատ բաներում մեղադրուեց Խորենացին, մինչև անգամ խա-
 բեքայութեան մէջ, որի մեղմացուցիչ հանգամանքը համարում էր
 հայրենասիրութիւնը: Քննադատների ասածներից մեծ մասը չէ կարելի
 չընդունել, և ես ընդունում եմ այն բոլոր քննադատութիւնները, որոնց
 դէմ կարող է արգարանալ Խորենացին իւր ժամանակով, իւր ժամա-
 նակի գիտութեան և հասկացողութեան աստիճանով և պարագաներով:—
 Բայց սորանից աւելի և ոչ մի կէտ: Խորենացին նոյնչափ ճշմարտասէր է,
 որչափ հայրենասէր, իսկ նորա հայրենասիրութեան չափ չկայ:

Այս զգացումներով ու համոզմամբ առաջնորդուած, այս յօդուածում
 մենք կանգ կառնենք Խորենացու մի քանի ակներև հակասութեանց վրայ,
 հակասութեանց, որոնց համար նա արժանացել է դառն ու կծու նկա-
 տալութեանց:

Իւրաքանչիւր բառը կշռող, ոչ միայն ճշմարտապէր, այլ և ճշգրիտ Խորենացին անշուշտ կարող էր սխալուիլ ժամանակագրութեան մէջ, ագրիւրների պակասութեան պատճառով, կարող էր հաւատ ընծայել ոչ այնչափ արժանահաւատ աղբիւրների, չունենալով քննադատական այն ղէնքերը, որով զինուած է այժմեան գիտութիւնը, բայց աշկարայ հակասել ինքն իրեն, մի երկու տող ներքեւում կրկնել իւր վերեւն ասածի հակառակը, այդ չափով անէր նա, այդ նա չէր կարող անել:

Սակայն քննադատութիւնը ցոյց է տալիս մի քանի այդպիսի կէտեր, որոնցով և կամենում ենք զրազուիլ այսօր:

Սկսենք մի փոքրիկ, բայց ակնյայտնի հակասութիւնից:

Խորենացին Բագրատունիներին համարում է սերուած հրէական ցեղից: Հաւանական է, որ Բագրատունիների հրէական ծագման մասին և Խորենացուց առաջ կար աւանդութիւն: Պար և մի այլ աւանդութիւն, որ Բագրատունիներին համարում էր սերուած Հայկից, կամ Արամնակից, որին համամիտ չէ Խորենացին (Տէս Խոր. Ա. 22, Բ 24): Բագրատունիների հրէական ծագումն ապացուցանելու համար Խորենացին չբաւականանալով աւանդութեան վկայութեամբ դիմում է և մի այլ միջոցի, յատուկ անունների ստուգաբանութեան: Հարկաւ, Խորենացուց իրաւունք չունինք պահանջելու, որ նա այդ ստուգաբանութիւնները կատարէր այժմեան բանասիրութեան (լեզուաբանութեան) ցոյց տուած օրէնքների համաձայն: Եւ նրան ու նրա ժամանակին բոլորովին ներելի են այսպիսի մերձեցումներ, ինչպէս օր. Սմբատ = Շամբաթ = Շարաթ: Այսպիսի ստուգաբանութեամբ Խորենացին Բագրատունիների կրած անունները բաժանում է երկու դասի, ա. երրայական անուններ, որ իբրեւ թէ առաջ կրում էին Բագրատունիները և բ. խժական, այն է՝ հայ - հեթանոսական անուններ, որ իբրեւ թէ միայն շատ ուշ սկսան գործածել Բագրատունիք: Այս ստորաբաժանումը հիմնուած է մի քանի հայ անունների բռնադրօս և արտաքին նմանութեան վրայ ենթագրական հրէական անունների հետ: Ահա Խորենացու իւր խօսքերը.

«Բայց ծանիր զՍմբատդ անուն, զոր յաճախ Բագրատունիք ի վերայ պատանեաց կոչեն, ճշմարիտ Շամբաթ է՝ ըստ նախնի իւրեանց խօսիցն, որ է երրայեցի» (Ա. 22): Մի այլ տեղ. «Բայց գիտեա՛, զի ի թողուլ ազգին Բագրատունեաց զօրէնս հարցն, նախ խժական ժառանգեցին յորջորջումն՝ Բիւրատ և Սմբատ և այլ այսպիսի կոչմունս, զրկեալ ի նախնական անուանցն, որպէս կոչէին յառաջ քան զուրանալն՝ Բագադիա, Տուբիա, Սենեքիա, Ասուդ, Սափատիա, Վազարիա, Ենանոս, Եւ ինձ թուի, թէ որ այժմդ կոչին Բագրատունիք Բագարատ՝ Բագադիա է դա,

և Ասուդ՝ Աշոտ, գոյնպէս և Վաղարիա՝ Վարազ, որպէս Շամբատ՝ Սմբատ» (Բ. 63)։

Այս երկու հատուածից երևում է, որ Խորենացին երկու անգամ Սմբատ անունը համարում է երրայական և մի անգամ՝ իւր ասածի հակառակ, ուրեմն և ինքն իրեն հակասելով։ Սմբատն համարում է խժական — հեթանոսական¹⁾։ Հակասութիւնն ակնյայտնի է, դորա դէմ ոչինչ չէ կարելի ասել, բայց արդեօք Խորենացուն իրե՞նն է այդ գոռացող հակասութիւնը, — այս մասին քննադատները ամենեին հոգս չեն քաշել և ուղղակի մեղադրել են Խորենացուն։ Մենք գոնէ միշտ կասկածել ենք։ Բարեբաղդաբար մեր բաղդատած Ներսէս գրչի օրինակը մի բանով արդարացնում է և Խորենացուն և մեր կասկածը։ Ահա՛ Ներսէս գրչի ընթերցուածը. «բայց գիտեա՛, զի ի թողուլ ազգին Բագրատունեաց զօրէնս հարցն, նախ խժական ժառանգեցին յորջորջումն՝ Բիւրատ և Տըրգատ և այլ այսպիսի կոչմունս»։ Այսպիսով հակասութիւնը բոլորովին ջնջւում է։ Պարզ է որ անուշադիր գրիչներից մէկը Տրգատի փոխանակ, սխալմամբ գրել է՝ Բագրատունիների մէջ յաճախ գործածուող Սմբատ անունը, որը մի քանի տող ներքևումն էլ կրկնուելու էր։ Մենք բոլոր յայտնի եղած ձեռագրերի Սմբատ ընթերցուածից նախընտրելի ենք համարում Ներսէս գրչի Տրգատ ընթերցուածը, ոչ այն պատճառով միայն, որ այդպիսով ջնջւում է ակնյայտնի հակասութիւնը, այլև այն պատճառով, որ այդ ընթերցուածը Սմբատ չլինելուց ի դատ, պէտք է անպատճառ Տրգատ լինէր։

Այդ երևում է այս հատուածը պարունակող 63-րդ գլխի վերտառութիւնից և բովանդակութիւնից. «Յաղագս Տրգատայ Բագրատունեոյ և անուանց ազգի նորա առաջնոյ»։ Երբ գլուխը ամբողջովին նուիրուած է Տրգատ Բագրատունուն, անուանց ստուգարանութեան մէջ պէտք է լինէր անշուշտ և Տրգատի անունը, Իսկ Խորենացին ինքը չէր կարող անուշադրութեամբ Տրգատի փոխանակ Սմբատ գրել, քանի որ այդ կլինէր անուշադիր թողնել գլխաւոր առարկան, որի մասին ճշտում էր, որի վրայ ուրեմն և կեդրոնացած էր։ Եւ մեզ թւում է թէ լուրջ քննադատութիւնը, նոյն իսկ առանց ունենալու Ներսէս գրչի «Տրգատ» ընթերցուածը պէտք է կարողանար վերականգնել ուղիղը, հիմնուելով ակներև հակասութեան և այդ 63-րդ գլխի վերտառութեան և բովանդակութեան վրայ։

Խորենացու այս հակասութիւն պարունակող հատուածը ունի և մի այլ հետաքրքրական կէտ, այն է՝ որ Խորենացին զգում էր Տրգատ և Բիւրատ

1) Տես այս մասին եւ «Քննական. Պատմ. Հայոց» Դարագաշեանի, երես 175.

անունների հեթանոսական ծագումը մինչդեռ նրանք չէ կարելի ասել Սմբատ և այլ անունների համար: Տրդատը իմ կարծիքով կրճատ ձևն է Ատար—դատա (Atare—data) այն է՝ Արա կատուր անունը, որ հանդիպում է և Աենդիդատում 4):

Ատարը հայերի մեջ դարձել է Ատր, իսկ ատրի կրճատ ձևը.—Տր րացի Տր-դատ անունից պատահում է և Տր—պատունի (փոխանակ՝ Ատր-պատունի) անուն մեջ: Քրիստոնեական կերպարանքի տակ պահպանուած և մինչև մեզ հասած «Բիւրապատիկի» առաջինը վկայում է նմանապէս Բիւրատ անունի դիւցապաշտական ծագմանը 2):

Տրդատ - Սմբատ անունների շփոթութիւնից ծագած հակասութիւնը մի փոքրիկ, րաց գեղեցիկ օրինակ է, որ ցոյց է տալիս մեզ այն ճանապարհը, որով պէտք է բնթանալք Խորենացու մի քանի ակներև հակասութիւնները բացատրելիս: Միւս կողմից այս օրինակը նորից ակներև է կացուցանում, թէ որչափ սխալում են քննադատները՝ կասկածելի, միևնույն և հակասական երևցած հատուածների համար մեղադրելով Պատմահօրը, առանց ուշք դարձնելու մեր այժմեան ունեցած բնագրի վիճակի վրայ:

Գանք մի աւելի մեծ հակասութեան:

Առաջին գիրք, գլուխ 21 և 22, Խորենացին մի առանձին ոգևորութեամբ խօսում է Պարոյրի թագաւորելու մասին, կոչելով Պարոյրին և նրա սերունդը՝ «բնիկք, արեանառուք և հաւաստի հարազատք»: Պատմում է նմանապէս թէ Աարրակէսը մեր քաջ նախարար Պարոյրին իւր կողմն է գրաւում, նրան թագաւորութիւն խօստանալով. «Յինքն և զքաջն մեր նախարար յանգուցանէ զՊարոյր, թագաւորութեան ձև և շուք խոստանալով նմա»: Եթէ չկամենանք բռնազրօսել բառերը և նրանց միտքը, այն ժամանակ այս ասացուածներից պէտք է հետևենք, որ Պարոյրով սկսում է նոր հարստութիւն, որ Պարոյրից առաջ և դառն հայպետներին՝ Պարէտից մինչև Սկայորդի, Խորենացին չէ համարում հարազատ, արեանառու և բնիկ, կամ այլ խօսքով ասած՝ Հայկայ սերունդից: Աւրեմ և Հայկից մինչև Անուշաւան, ըստ Խորենացու, կարելի է կոչել առաջին բնիկ հարստութիւն, Անուշաւան - Պարէտից մինչև Սկայորդի՝ երկրորդ, ոչ - բնիկ, ոչ - հարազատ հարստութիւն և վերջապէս՝ Պարոյրից սկսած մինչև միւս Հայկակը, ընդամենը եօթն հոգի, երրորդ, բնիկ հարստութիւն: Յովհաննէս կաթուղիկոսն էլ, որ

1) Ormazd et Ahriman, J. Darmesteter, p. 256.

2) Եղովրդի բերանում: մի քանի գաւառներում: Տրդատի փոխանակ հանդիպում ենք «Եղգատ» ձեւին:

բառ առ բառ արտագրում է Խորենացին, և կարող է համարուիլ իրրե Խորենացու մի ընդօրինակութիւն կատարուած ժ. դարի սկզբում, այս հատուածը հասկանում է ինչպէս պէտք է հասկանալ ինչպէս կարելի է միայն՝ հասկանալ: — «Ի զարմից սորա (Անուշաւանայ) և զաւակաց ոչ տիրեալ գտանէին հայրենի նահապետութեանց, այլ այլք ոմանք բռնակալեալք ոչ ըստ ազգի, այլ ըստ յառաջագիմութեան տիրեալ Թորգոմեանս գրոհի որոց անուանքն Պարէտ, Արբակ, . . . Սկայորգի, յետ ամենեցուն սոցա Պարոյր անուն՝ յազգէ Հայկայ, զանազգիսն ի բաց լքեալ, և զնահապետութիւն ազգի իւրոյ վերստին նորոգեալ պայազատէր» (Յով. կաթ. գլ. Բ):

Յովհաննէս կաթողիկոսի այս ասութեան մէջ ոչինչ հակառակ չկայ Խորենացուն, այլ ընդհակառակն այս գլխովին համապատասխանում է Խորենացու 21 և 22 գլուխներին: Յովհաննու «անազգի» բառը Խորենացու «ընիկի» հարադատի և արեանառուի՝ հակադիրն է. մինչև անգամ՝ «ոչ ըստ ազգի, այլ ըստ յառաջագիմութեան տիրեալ Թորգոմեանս գրոհի» Խորենացու բառերն են, մի ուրիշ երեսից ընդօրինակուած՝ — «ի սմանէ յառաջ՝ ոչ ըստ ազգի, այլ ըստ յառաջագիմութեան արանց, զի և ամենեքեան յԱրբահամէ» (Խորեն. Ա, 19): Խորենացու ասածը Յեսուի յաջորդների մասին Յովհաննէս կաթողիկոսը փոխ առնելով գիտակցաբար՝ յարմարեցնում է Անուշաւանի յաջորդներին, առանց մեղանշելու պատմութեան մոքի դէմ: Այս լոկ ոճի կամ բառերի փոխառութիւն է և այսպիսի փոխառութիւններով ծայրէ ծայր լիքն է Յովհաննէս կաթողիկոսի Պատմութիւնը:

Ուրեմն և Յովհաննէս կաթողիկոսը իրենից ոչինչ չէ հնարել, այլ գրեթէ բառացի կրկնել է Խորենացու միտքն ու բառերը: Վարբակէսին վերագրուած վարմունքիցն էլ երևում է, որ Պարոյրը Սկայորգուն հակառակ մի նախարար էր, որին Վարբակէս խոստանում էր թագաւորութիւն եթէ Պարոյրն օգնէր նրան՝ Վարբակէսին: Պարոյրն օգնում է Վարբակէսին և Վարբակէսից էլ ինքն է օգնութիւն գտնում: «Սա (Պարոյր) ոչ փոքր ինչ օգնականութիւն գտեալ ի Վարբակայ մարէ» — հարկաւ, ընդդէմ Սկայորգու, որից և խլում է իշխանութիւնը: Այս վերջին գործողութիւնը արտայայտուած է Խորենացու մէջ՝ «Որ ի Սկայորգւոյն Պարոյր առնելով զիշխանութիւնն, առաջին ի Հայս թագաւորէ» (գլ. 21): «Առնելով զիշխանութիւնն կամ զտէրութիւնն» ոճը յատուկ է Խորենացուն և սովորական գործածուած, ինչպէս օր. Բ. գիրք, 10 գլխում՝ «և որ ինչ (տպ. ինչ որ) յետ նորա եղեն թագաւորք աշխարհիս մերոյ ի նորին

սերմանէ, որդի ի հօրէ առնելով զտէրու թիւնն, անուանեցան Արշակունիք յԱրշակայ»:

Այս բոլորը ինքն ըստ ինքեան շատ պարզ և որոշ է, և այս բաների դէմ ոչ ոք ոչինչ չէր ունենայ, եթէ որ նոյն 22-րդ զլխում, Հայկազունի առաջին թագաւորների ցանկում, Պարոյր անուան կողքին չլինէր երկու բառով մեկնութիւն՝ «Պարոյր, որդի Սկայորդու»:

«Որդի Սկայորդու» երկու բառը ամբողջապէս հակասական են թէ Խորենացու 21 և 22-րդ զլուխներին և թէ, բնականաբար, այդ զլուխների միաքն անփոփոգ Յովհաննէս կաթողիկոսի հատուածին: Ո՞նց, եթէ Պարոյրը Սկայորդու որդին էր, ուրեմն Սկայորդին էլ և նրա հայրը կամ նախորդն էլ, նախորդի նախորդն էլ, և ըստ կարգին դէպի վեր, նոյնպէս և նոյն չափով հարազատ էին, և արեան առու և բնիկ: Ուրեմն և Խորենացու առանձին իմն ուրախութիւն յայտնելը Պարոյրի հարազատութեան մասին անտեղի էր, այդ ուրախութիւնը պէտք է յայտնէր նա գոնէ Սկայորդու համար, եթէ Սկայորդին իրաւամբ Պարոյրի հայրն էր:

Ակներեւ է որ 21 և 22-րդ զլուխները մի կողմից և միւս կողմից այս երկու բառը՝ «որդի Սկայորդու», տրամադծօրէն հակասում են միմեանց, ուստի և պէտք է ընտրել սրանցից մէկն ու մէկը:

Մենք չենք կարող ենթադրել, որ Խորենացին երկու զլուխ Պարոյրի մասին գրելուց յետոյ, երկու խօսքով ջրէր իւր երկու զլխում ասածները՝ ուստի և «որդի Սկայորդու» բառերը մենք համարում ենք ընդմիջարկութիւն, յետոյ ներմուծում:

Մինչև այժմ Խորենացիով զբաղողները կամ չեն նկատել այս հակասութիւնը և կամ եթէ նկատել են, աշխատել են մի տեսակ ելք գտնել, խուսափել կնճռի գծաւարութիւնից:

Անգլուան բաւականացել է մի ծանօթութեամբ, որի մէջ «իսկ բնկի նախնւոյն» բառերի և Յովհաննէս կաթողիկոսի ասածի վրայ հիմնուելով, հետեցնում է որ Պարոյրով սկսւում է նոր հարստութիւն և թէ այս հարստութիւնը Հայկի ցեղիցն էր, ըստ Խորենացու: (Collection, I, p. 32, n. 2):

Իմին, իւր Династическій списокъ Хайкидовъ (1884) գրուածքի մէջ, ամբողջովին ընդունելով Խորենացու և Յովհաննէս կաթողիկոսի միաբան վկայութիւնները Պարոյրի մասին, երևի նկատում է մեր վերևումը մէջ բերած մեծ հակասութիւնը, թէև այդ մասին որոշակի ոչինչ չէ ասում, Իսկ հակասութիւնից խուսափելու համար դիմում է հետեւեալ անյաջող սրամտութեանը: Սկայորդուն հանում է Պարէտեան ցանկից և դնում է Պարոյրեան ցանկի զլխում, իբրև Պարոյրի հօր, մինչդեռ յայտնի է, որ

Խորենացու մէջ Պարէտեան ցանկը վերջանում է Սկայորդով, իսկ Պարոյրեան ցանկը բոլորովին առանձին է և անջատ: Էմին Պարոյրին կուռացնում է ոչ Սկայորդու, ինչպէս անում է Յովհաննէս կաթողիկոսը, այլ «րա նախորդի՝ Կայաակի հետ»¹): Երեւի Կայաակին յաղթելուց յետոյ, Պարոյրը համար տար արհաւիրում է Տրապարուեց գահից և իւր հօրը՝ Սկայորդուն դրեց գահի վրայ: Այսպիսի քնքոռ զգացմունքներ Էմինը իւր նոյն գրուածքի մէջ վերագրում է և Տիգրան Երուանդեանին: Տիգրանին համարում է նոր հարստութեան կանգնող և պարագլուխ, բայց այդ հարստութեան իբրև առաջին թագաւոր դնում է Երուանդին:

Անշուշտ, այս առասպելախառն թագաւորների ծննդաբանութեան վրայ մենք երկար չէինք կանգնիլ, եթէ չլինէր Խորենացու բնագիրը ուղիղ և անսխալ վերծանելու խնդիրը:

Գարագաշեան այս կէտում վարում է աւելի մեծ ըմբռնողութեամբ և աւելի վստահ, առանց խնդրի կնճռոտ և դժուար կէտերից խուսափելու: Բոլոր յանցանքը ձգում է նա «պառաւական վէպեր գրող» Յովհաննէս կաթողիկոսի վիզը, իբրև թէ Յովհաննէս կաթողիկոս իրենից հնարելիս չի նի Սկայորդու և Պարոյրի ստիսութիւնն ու հակառակամարտութիւնը (Քննակ. Պատմ. եր. 187): Իսկ Խորենացու «բնիկ, հարազատ, արեանառու» բառերի վերաբերութեամբ, որ վիճելի խնդրի ծանրութեան կեդրոնն են, անում է հետևեալ՝ խելքի մօտիկ ենթադրութիւնը. «կոչել Խորենացւոյն զՊարոյր և զյաջորդս նորա «բնիկ, արեանառու և հարազատ» ոչ թէ կցուցնէ թէ քան զնոսա առաջինք օտարագիւղի էին, քան զի Պարոյրի նախորդն Սկայորդի, ըստ նոյն պատմութեան, հայր էր Պարոյրի»²): այլ Խորենացին, հաւանականագէտ, զՊարուրեանս, իբրև Հայկայ սերունդ, կկոչէ բնիկ և հարազատ, համեմատութեամբ յաջորդ հարստութեան Արշակունեաց, զորս օտարագիւղի կհամարէր: Յովհաննէս կաթողիկոսի ենթադրութեան նման կամայական, երբեմն նաև պառաւական վէպեր դժբախտութեամբ շատ են առ պատմիչս մեր, մանաւանդ առ յետինս» (187):

Այս ինքնուրոյն և ուշադրութեան արժանի ենթադրութեան հետ մենք չենք կարող համաձայնիլ, որչափ և մեծ լինի մեր ունեցած վարկն ու յարգանքը դէպի Քննական Հայոց Պատմութեան հեղինակը: Խորենացու «հասանելով ի տեղիս մերում իսկ բնկի նախնոյն» և «Արդ այժմ անցից թիւ մերոց արանց, մանաւանդ թագաւորաց, ա-

1) Համարելով, ինչպէս ընդունուած է մինչև այժմ, Կայաակին եւ Սկայորդուն տարբեր, միմեանցից որոշ երկու անձն:

2) Այս սրտաճառաբանութիւնը մենք ստորագծեցինք:

աացուածները պարզ և աշխարայ վկայում են, որ բնիկ է Պարոյրը նախորդներին և ոչ յաջորդների վերաբերութեամբ: Հասանել բայը, նաև առջանելը պարզ ապացոյց են այս բանին: Երկրորդ՝ Արշակունիների մասին ոչ մի տեղ Խորենացու մէջ չենք հանդիպում ասուած ոչ - բնիկ, խորթ, անհարազատ և այլն: Ընդհակառակն՝ նոյն իսկ ինքը Պ. Պարագաշեան գեղեցիկ և համողիչ փաստեր է բերում Արշակունիների բնիկութեան և հարազատութեան վկայող (Քննակ. Պատմ. գլ. Գ.), Մեր հին պատմիչներից Արշակունիները սովորաբար կոչուած են՝ «բնիկ տեարք աշխարհիս» (Քննակ. Պատմ. եր. 85—88): Եւ վերջապէս՝ Պարագաշեանի գլխաւոր պատճառաբանութիւնը, թէ՛ «քանզի Պարոյրի նախորդն Սկայորգի, ըստ նոյն պատմութեան, հայր էր Պարոյրի» ընկնում է ինքն իրեն, եթէ մեր ենթադրութիւնը ճշմարիտ է՝ որդի Սկայորգու, երկու բառի ներմուծութիւն լինելու մասին: Արքան մենք ճանաչում ենք Յովհաննէս կաթողիկոսին, նա անընդունակ էր գրել Խորենացու հակառակ, իսկ Պարոյրին հանել Սկայորգու գէմ՝ չէ հակառակ Խորենացու, այլ այդ ներմուծեալ երկու բառին: Իսկ այս ընդմիջարկութիւնը, հաստատ կարելի է ասել, որ կատարուել է Յովհաննէս կաթողիկոսից յետոյ: Յօվ. կաթողիկոսի մէջ չկան «որդի Սկայորգու» բառերը: 2 կան այս բառերը և մեր միւս պատմիչներին երկերում, որոնք սակայն չէին կարող միմեանց խօսք տալ, հէնց անպատճառ այս երկու բառը բաց թողնել: 2է կարելի ենթադրել, որ ամենուրեք ստրկօրէն ընդօրինակող Յովհ. կաթողիկոսը հէնց այս երկու բառը մոռացաւ արտագրել. իսկ ենթադրել թէ գիտութեամբ բաց թողեց, աւելի դժուարին է, քանի որ գիտենք այն անպայման հաւատը, յարգանքը, կարելի է ասել՝ պաշտամունքը, որ մեր պատմիչները, մասնաւորապէս Յովհ. կաթողիկոսը, տածում էին գէպի Պատմահայրը:

Մեր մինչև ցայժմ յայտնած կարծիքներին հակառակ է դուրս գալիս նաև գերմանացի գիտնական Ադոլֆ Բաումգարտների մի ենթադրութիւնը: Այս գիտնականը իւր՝ Խորենացու Պատմից գրքի քննադատութեան մէջ՝ ի միջի այլոց մի մեծ ծանօթութիւն է դնում (Բաղմ. 1887, եր. 312, ծնթ. 1) խօսելով մեզ հետաքրքրող խնդրի վրայ: Հերքելով Լանգլուայի մի այլ կարծիքը, որով Լանգլուան (Coll. I. 316, not. 1) ենթադրում է թէ՛ թերևս Յովհաննէս կաթողիկոսը իւր ձեռքումն ունէր բացի Խորենացուց և Մար Աբասի բուն գրուածքը, որից և քաղեց Սկայորգու և Պարոյրի սոսկութիւնը և «անազգի» բռնաւորների մասին տեղեկութիւնը, ինքն այն կարծիքն է յայտնում, որ Յովհաննէս կաթողիկոսը բացի Խորենացուց չունէր այլ աղբիւր այս մեզ հետաքրքրող խնդրի վրայ ճառելիս:

Այս բանում մենք էլ համաձայն ենք Պ. Բաումգարտներին: Բայց յարգոյ գիտնականը դեռ աւելի հեռու է գնում: «Անազգիների» և հարազատների խնդիրը նա չէ համարում բուն Խորենացու բնագրից ծագած: Ինչպէս մենք, այլ նման Պ. Պարագաշեանի վերագրում է միմիայն Յով. կաթողիկոսին, առանց նեղութիւն քաշելու, գոնէ ինչպէս անում է Պ. Պարագաշեան, նոյն իսկ բուն Խորենացու մէջ եղած հակասութիւնը այս կամ այն ձևով պարզելու: Սակայն Բաումգարտները տարբերում է և նրանով Պարագաշից, որ Յովհ. կաթողիկոսի կարծիքը վերագրում է ոչ թէ նրա «պառաւական» գրոյցներ անելու հակումին, այլ նրա՝ պատմարան կաթողիկոսի, ունեցած Խորենացու օրինակի (ձեռագրի) պակասաւորութեանը: Բաումգարտներ կարծում է թէ Յով. կաթողիկոսի «ոչ ըստ ազգի» այլ ըստ յառաջագիմութեան արանց» խօսքերը, որ առնուած են Խորենացուց, կաթողիկոսի ունեցած օրինակում ոչ թէ Յեսու անուան տակն էին դրուած (ինչպէս որ է Խորենացու ճիշտ օրինակներում), այլ Անուշաւան անուան տակը, որից հետեցրեց Յովհ. կաթողիկոսը թէ Անուշաւանի յաջորդները «անազգի» կամ բռնաւորներ էին: Բաումգարտների այս ենթադրութիւնից ծագում է երկու հետեանք. ա) որ Պարոյրի «հարազատ» լինելը և նորա նախորդների «անազգի» կամ «անհարազատ» լինելը ծագում է, իբրև թէ, միմիայն կաթողիկոսի ունեցած Խորենացու օրինակի պակասաւորութիւնից, բ) որ այդ օրինակը լաւ օրինակ չէր, պակասաւոր էր:

Եթէ Բաումգարտների կարծիքը՝ օրինակի պակասաւորութեան մասին հիմնաւոր էլ լինէր, այսու ամենայնիւ դրանից չէր հետևի, որ Պարոյրի «հարազատութիւնը» և հանկադարարձաբար «Սկայորդու անհարազատութիւնը» կաթողիկոսի ունեցած օրինակի պակասաւորութիւնից ծագած մի սխալ է, քանի որ մենք տեսանք, որ այդ «բնկութեան, հարազատութեան» խնդրին վկայում են և այդ խնդրին են նուիրուած Խորենացու 21 և 22-դ գլուխները, բոլորովին անկախ Յով. կաթողիկոսի պատմութիւնից: Բայց մենք համաձայն չենք նաև Բաումգարտների յայտնած կարծիքին օրինակի պակասաւորութեան մասին:

Հատ ճիշտ է որ «անազգի» բառը բոլորովին նոյնն է «ոչ ըստ ազգի» այլ ըստ յառաջագիմութեան արանց» ոճի հետ: Բայց չէ՞ որ մենք գիտենք Յովհաննէս կաթողիկոսի գրելու ձևը, սովորութիւնը, նա անգիր գիտէ Խորենացու (նաև Եղիշէի, Սեբէոսի և այլն) բոլոր ոճերն ու դարձուածները և տեղի ան տեղի գործ է ածում այդ ամբողջ ասացուածները բառ առ բառ, թէ նոյն անձանց և անցքերի վերաբերութեամբ, որոնց համար գործ է դրել Խորենացին, և թէ ուրիշ հեռաւոր անցքերի և անձի նքն երի համար: Եթէ այս վերջին դէպքում, այդ

ոճերի գործածութեան գաղտնիքը կամենանք բացատրել այնպէս, ինչպէս այդ
 անուամբ Բառամբարտներ, բոլորովին խառնաշփոթութեամբ պիտի ենթադրենք
 պատմաբան կաթողիկոսի Խորենացու օրինակը, և այդպիսով էլ գեո-
 շատ բան անբացատրելի կմնայ: Յովհ. կաթողիկոսը Խորենացու բառե-
 րով և ոճերով արտայայտուած և նկարագրուած է նաև բազմաթիւ այնպիսի
 դէպքեր, որոնք Խորենացուց դարերով ու շէն կատարուած: Այս-
 պիսի կէտերը արդէն՝ ձեռագրի որ և է պահասաւորութեամբ կամ խառ-
 նաշփոթութեամբ չէ կարելի բացատրել, այլ միայն և միմիայն պատ-
 մարան կաթողիկոսի ոճաբանութեան առանձնայատկութեամբ: Բերենք
 չէնց առաջին հանդիպած օրինակները: Յով. կաթողիկոսը Աշոտ
 Բագրատունի թագաւորի թագադրութիւնը նկարագրելուց յետոյ
 ասում է նորա մասին. «Եւ այնուհետեւ բազում երեւելի կարգս յար-
 գարէր աշխարհի տէրութեան իւրոյ յօրինուածս տանց, ազգաց, քա-
 ղաքաց, շինից, դաստակերտաց, և հարթհաւասար ըստ իւրաքանչիւրոցն կա-
 տարէր կարգս լեռնականաց և քերմահոյիտ բարեխառն գաշտականաց, և
 զամենայն տափարակ տեղիս՝ ադարակս և գոմս դնէր, և զմարմանդս յայ-
 գիս և ի բուրաստանս զարդարէր. և զամենայն որ ինչ օրէն է թագաւո-
 րութեան և որ ինչ ի թագաւորութեան և որ շուրջ զթագաւորութեամբ
 ոչինչ իւրք կասեցուցանէր, և գրեթէ հարստագոյն և խոհեմագոյն քան
 զամենայն թագաւորութիւնս գտանէր» (եր. 78, տպ. Մոսկուա, 1853): Այս
 հատուածը ամբողջ բանաբաղութիւն է Խորենացու զանազան տեղերից և
 մասնաւորապէս Ա. 6-դ գլխից՝ «Գեղեցիկ իմն կարգելով զերկիրն, հաւա-
 սարելով զլեռնայինն և զքերմահոյսն ի բարեխառն և ի զուգագեղեցիկ վայել-
 չութիւն իւրոյ թագաւորութեանն»: Բերենք մի այլ աւելի որոշ օրինակ: Յով-
 հանէս կաթողիկոսը նկարագրում է Աշոտ իշխանաց իշխանին ճիշտ միւսնոյն
 բառերով, որով նկարագրուած են Խորենացու մէջ Սմբատ Բագրատունին
 և Տիգրան Արուանդեանը. «Վասն զի ի տիս հասեալ միջակութեան՝ քա-
 ջահասակ էր նա և անձնեայ և թիկնաւէտ և զուարթերես և մրայօն նկա-
 րէն իմն, և նիշ արեան յաչսն ունելով՝ որպէս զյակինթ կարմիր ի մէջ
 մարգարտի ծագեալ, և վայելչացեալ գեղեցկութեանն ալեօք. մեծիմաստ
 և քաղցրաբան, և առ կերակուրս խրախճանաց պարկեշտ. ոչ խանդացեալ
 նորա ընդ լաւագոյնսն և ոչ արհամարհեալ զնուաստագոյնսն, այլ հասա-
 րակաց ի վերայ տարածանէր զզգեստ խնամոց իւրոց, և լծակօք իմն կշռէր
 նախ զիւր և ապա զամենեցուն կենցաղս. միանգամայն իսկ ասել, եթէ որ
 ինչ մարդկութեանս է պիտանի ոչ ինչ կասեցուցանէր» (եր. 77): Այն-
 պէս որ այս բառացի բանաբաղութեամբ մինչև իսկ կարելի է Խորենացու
 այժմեան բնագիրը սրբագրել: Զոր օրինակ այս վերջին հատուածից մենք
 իրաւունք ունինք մակաբերել, որ տասներորդ դարի սկզբում, երբ գրում

էր Յովհ. կաթողիկոսը, Խորենացու և գիրք, գլ. 24 - ի «զնուաստան» ընթերցուածը գեռ չէր թարգմանուել՝ «ըստրուկս» ինչպէս այդ տեսնում ենք Լամբրոնացու կոչուած օրինակում: Վամ թէ նոյն գլխի «զինամոցն իւրոց ի վերայ տարածել զգեստս» այժմեան տպագրի ընթերցուածը կարող ենք սրբագրել՝ «տարածանել զգեստս» լաւագոյն ընթերցուածով: օրին երաշխաւորում են և ուրիշ ձեռագրեր: Միով բանիւ ասած, ամբողջ Յովհաննէս կաթողիկոսը բանաբաղուածին է ոճերի, ասացուածների, բառերի, այնպէս որ շատ անգամ ներքին իմաստը բոլորովին կորչում է փոխառնովի ոճերի տակ: Ուստի և Բառւոյնագարտների կարծիքը մեզ անհիմն է երևում: Մենք չենք կարող և իրաւունք էլ չունինք օրինակի պակասաւորութեան վերագրել այն, ինչ որ յատուկ է և անբաժան պատմիչ կաթողիկոսի գրելու եղանակից, նորա ճոռոմաբանութիւնից: Նա ոչ իւր սեփական մտքերն ունի և ոչ էլ իւր սեփական բառերն ու ոճերը, այլ այդ ամենը փոխ առնելով այստեղից այնտեղից, կցկտուր կարկատում է, առանց գոնէ կարկատանների ձևին ու գոյնին ուշք դարձնելու:

Այսպիսով մենք հաստատ ենք մնում մեր ենթադրութեանը, որ Պարոյր չէր, ըստ Խորենացու, «որդի Սկայորդւոյ»: Այս բանին վկայութիւն է և այն, ինչպէս ասացինք, որ այս երկու բառը չեն գտնւում մեր և ոչ մի այլ պատմութեան մէջ: Իսկ յայտնի է, որ մեր բոլոր պատմիչները առանց բացառութեան, Հայկազունիների պատմութիւնը գրելիս ունեցել են իբրև աղբիւր միմիայն Խորենացին: Սրանից հետևում է և այն, որ «Որդի Սկայորդւոյ» ներմուծութիւնը կատարուել է համեմատաբար շատ ուշ:

Հարկաւոր է սակայն խոստովանել, որ մինչև այժմ չէ գտնուել ձեռագիր, որ չունենար այս երկբառեան ներմուծութիւնը, կամ եթէ կայ այդպիսի ձեռագիր, ուշադրութեամբ ղննող չէ եղել: Բայց մինչև օրս չունէինք մենք և սխալ «Սմբատի» «Տրդատ» ուղիղ ընթերցուածը:

Մնում է մեզ ցոյց տալ թէ ինչ պատճառով կարող էր գոյութիւն ըստանալ և ներս սպրդել Խորենացու բնագրի մէջ այս ընդմիջարկութիւնը:

Այս դէպքում ներմուծութիւնը չէր կարող ունենալ որ և է նպատակաւորութիւն, ինչպէս այդ մենք ենթադրեցինք Վատարի՝ Վուսեղ թարգմանութեան դէպքում (Ա. յօդուած): Պարոյրը լինէր Սկայորդու որդի կամ չլինէր, դրանից ոչինչ հետևանք չէր ծագի, բացի բնագրի խանգարումից: Ուստի և մեր կարծիքն է, որ «որդի Սկայորդւոյ» բառերը լուսանցքի բացատրութիւն են: Քսան և երկուերորդ գլխի վերնագիրը, այսպէս ասած, թելադրում էր քիչ թէ շատ բանիմաց և հետաքրքիր գրչին մի այդպիսի ընդմիջարկութիւն: Ահա այդ գլխի վերնագիրը. «կարգ թագաւորաց մերոց և համար նոցունց որդի ի հօրէ

առնելով՝ որից յետոյ դրուած է վերից վար Մարաց և Հայոց թագաւորների ցանկը՝

Վարրակիս.	Պարոյր (որդի Սկայորդւոյ).
Մօդակիս.	Հրաչեայ.
Առտիկիս.	Փառնուաս.
Դէովկիս.	Պաճոյճ.
Փռաւորտիս.	Կոռնակ
Կուաքս.	Փաւսս
Աժդահակ.	Միւս Հայկակ.

Այս ցանկից և գլխի վերնագրից երևում էր, որ Հրաչեան Պարոյրի որդին էր, Փառնուասը՝ Հրաչեայի որդին, Պաճոյճը Կոռնակի, և այլն ըստ կարգին: Բաւական էր որ գրչի գլխում ծագէր այս շատ բնական հարցը. իսկ Պարոյրն ո՞ւմ որդին էր, եւ մենք կուենայինք, ինչպէս և ունեցել ենք՝ պատասխանը. «Որդի Սկայորդւոյ»: Իսկ թէ ինչո՞ւ անպատճառ «Սկայորդւոյ» և ոչ մի ուրիշի, այդ էլ շատ պարզ է, որովհետեւ Սկայորդին է նախընթաց հայ նահապետների ցանկի վերջինը, այն է՝ Պարոյրին ամենից մօտիկը:

Խորենացու թարգմանիչները, առանց բացառութեան, ոչ միայն Պարոյրին համարում են Սկայորդու որդի, որ այդպէս էլ պէտք է լինէր, այլ նաև, այդ հասկացողութեամբ առաջնորդուած, Ա գիրք, 21 գլխի վերնագրի «Որ ի Սկայորդւոյն Պարոյր» ասացուածը թարգմանում են առանց տատամսութեան. «Սկայորդու որդի Պարոյր», որով աւելացնում են մի նոր կեղակարծ փաստ յօդուած ընդմիջարկութիւնից ծագած սխալի:

ՄԻԱԲԱՆ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Զէլանդիայի եպիսկոպոս Մարտենսէնը յայտնի է իւր աստուածաբանական և բարոյագիտական գրուածքներով բոլոր լուսաւոր աշխարհին: Նորա գրուածքները բազմիցս տպագրուած են ու այլ և այլ լեզուներով թարգմանուած, և որովհետեւ ներկայումս առանձին ձգտումն է նկատուում թէ գիտութեան և թէ հասարակութեան մէջ դէպի բարոյական խնդիրներն ու հետազօտութիւնք, ուստի և հարկ համարեցինք նորա